ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին թարմացումը՝ 18 հոկտեմբերի 2019 թ.

Alamo Rent-A-Car, National Car Rental и Alamo Rent A Car բրենդերը կառավարող JMS LLC ընկերությունը հարգում է Ձեր անձնական տվյալների գաղտնիությունը: Մենք ներդրել ենք սույն Գաղտնիության քաղաքականությունը("Privacy Policy"), որպեսզի պարզաբանենք մեր կողմից Ձեր անձնական տվյալների հավաքագրման և օգտագործման գործընթացը: Մանրամասներին կարող եք ծանոթանալ կից ներկայացված բաժիններում:

ԻՆՉՊԻՍԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆՔ ՄԵՆՔ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

Ձեր անձնական տվյալները

Դուք կարող եք մեզ տրանադրել որոշակի տեղեկություն՝ Ձեր ֆինանսական գործարքի, կամ մեր կայքերում ու գրասենյակներում Ձեր փոխգործակցության վերաբերյալ: Մենք Ձեզնից հավաքագրում ենք հետևյալ անձնական տվյալները.

- Ձեր անունը, կոնտակտային տվյալները, ծննդյան տարին և ամսաթիվը, վարորդական վկայականի համարն ու վավերականության ժամկետը, ինչպես նաև կոնտակտային տվյալներ արտակարգ իրավիճակների դեպքում;
- Ավտոմեքենայի վարձակալությանը վերաբերող տեղեկատվություն, այդ թվում՝ վարձակալության վայրը, ժամկետը, վարձակալվող տրասպորտային միջոցի տեսակը և ձեր նախապավությունները;
- Ձեր կրեդիտային քարտի տվյալները, առցանց օգտատիրոջ հաշվառման տվյալները, անդամակցության վկայագիրը, Ձեր ուղևորների անձնագրային տվյալները եւ տեղեկություններ, թե արդյոք անդմակցում եք հաճախակի մեկնողի կամ ճամփորդական համագործակցության:

Հանդիսանալով Enterprise Holdings, Inc կամ նրա ցանկացած դուստր ձեռնարկության ֆրանչայզեր (ստորև՝ «Alamo»), Alamo-ը կարող է մեզ տրամադրել Ձեր կոմից իրականացված ամրագրման եւ նախնական պատվերների վերաբերյալ տեղեկություններ: Մենք և Alamo-ը հանդիսանում ենք այս տրանզակցիաների տվյալների անկախ կարգավորիչներ: Մենք նաև Ձեզ վերաբերող տեղեկություններ ենք փոխանցում Alamo-ին, ինչպես նկարագրված է «Ում հետ ենք մենք կիսվում տեղեկատվությամբ» բաժնում:

Երրորդ կողմերը մեզ են տրամադրում են Ձեր մասին լրացուցիչ տեղեկություններ, որոնց թվում են՝

Third parties provide us with additional information about you, including:

- Ռեֆերալ աղբյուրներ, ինչպիսիք են երրորդ կողմ հանդիսացող առցանց ամրագրման կայքերը (որոնք մեզ տրամադրում են ընդհանուր կոնտակտային տվյակներ և ամրագրման հաստատման համարը, ձեր ամրագրումը պարզեցնելու նպատակով), Ձեր գործատուն (ընդհանուր կոնտակտային տվյալներ) եւ Ձեր ապահովագրական ընկերությունը (ընդհանուր կոնտակտային եւ ապահովագրության տվյալներ):
- Մեր Refer-A-Friend «Հրավիրիր ընկերոջդ» ծրագրերը, որտեղ դրանք կիրառելի են:
- Հյուրանոց, ավիաուղի և անդամակցության ակումբներ, որոնք մեզ տրամադրում են ընդհանուր կոնտակտային տվյալներ եւ ամրագրման վերաբերյալ տեղեկություն:
- Վարկային հաշվետվությունների գործակալություններ, որոնք ֆինանսական խարդախության կանխման նպատակով մեզ են տրամադրում ինքնության վերաբերյալ տեղեկություն:
- Ծառայություն մատուցոներ, ինչպիսին է հաճախորդների աջակցությունը (հաճախորդին տրամադրված ծառայությունների և Ձեր կողմից կատարված հարցումների մասին տեղեկություն) և մարքեթինգային ծառայությունների մատուցողներ(տվյալներ, որոնք

օգնում են մեզ ավելի լավ տեղեկացնել մեր արտադրանքի և ծառայությունների մասին):

Ձեր համաձայնությամբ, մեզ հասանելի կլինի Ձեր գտնվելու վայրի մասին տեղեկությունը , կամ տեղանքի ցուցիչների հավաքագրումը Ձեր բջջային սարքավորման կամ IP- հասցեի միջոցով: Մենք կօգտագործենք այդ տեղեկությունը, որպեսզի Ձեզ առաքենք մեր գրասենյակների գտնվելու վայրերի մասին ծանուցումներ, վերադարձի մասին տեղեկություն, տեղային առաջարկներ եւ այլ տեղեկատվություն, որը, կարծում ենք, կարող է օգտակար լինել՝ մատուցելու Ձեզ լավագույն ծառայությունները: Մենք օգտագործում այս տեղեկությունը բացառապես Ձեզ ծառայություն մատուցելու նպատակով, այլ ոչ թե Ձեր գտնվելու վայրը որոշելու համար: Ձեր համաձայնությամբ, մեր հավելվածը կօգտագործի Ձեր սարքավորման տեսախցիկը: Եթե դուք անցյալում թույլ եք տվել մեզ օգտագործել Ձեր տեղակայման մասին տեղեկությունը կամ Ձեր սարքավորման տեսախցիկը, իսկ այժմ ցանկանում եք չեղարկել թույլտվությունը, խնդրում ենք փոխել Ձեր սարքավորման կարգավորումները:

Փոխադրամիջոցի տվյալները

Մեր փոխադրամիջոցները կարող են հագեցած լինել տվյալներ հավաքագրող և փոխանցող սարքավորումներով ("Vehicle Data Systems"): Այն կարող է իր մեջ ներառել տվյալներ ինքնագիր սարքերից, գլոբալ տեղակայման սարքավորումներից, OnStar համակարգերից կամ ուրիշ այլ նմանատիպ տեխնոլոգիաներով հավաքագրած տեղեկությունները: Որոշ կամ բոլոր Փոխադրամիջոցների Տվյալների Համակարգերը գործի կդրվեն վարձակալության ժամանակահատվածում: Տեղավորման և հասանելիության դեպքում Փոխադրամիջոցի Տվյալների Համակարգը մեզ թույլ կտա հավաքագրել և օգտագործել այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են (1) գտնվելու վայրը, (2) բախման մասին տեղեկությունը, (3) փոխադրամիջոցի գործառնության մասին տեղեկությունը, ինչպես գործառնության վիճակը, մեքենայի վազքը, անվադողերի ճնշումը, վառելիքի վիճակը և այլ դիագնոստիկ և տեխնիկական հատկանիշների մասին տեղեկություն: Մեկ անգամ հավաքագրելուց հետո, այս տեղեկությունները կարող են համադրվել Ձեր տրամադրած տեղեկությունների հետ և կարող են օգտագործվել անվտանգության ապահովման, գործառնության և նմանատիպ այլ նպատակներով, այդպիսով մենք կարող ենք ապահովել ավելի լավ ծառայությունները: Համաձայն Գաղտնիության քաղաքականության, մեր հավաքագրած տեղեկությունների օգտագործումը կարող է ներառել նաև տեղեկության տրամադրումը երրորդ կողմերին, որոնք են ծառայության մատակարարները, գործընկերները: Մենք նաեև կարող ենք օգտագործել տեղեկությունները, պահպանելով դրանք վարձակալության պայմանագրի ավարտից հետո: Ձեր կողմից տրամադրած տրանսպորտային միջոցների տվյալների համակարգերի օգտագործումը կարգավորվում է պայմաններին եւ գաղտնիության քաղաքականությանը համաձային, որը հրապարակվել է համապատասխան տրանսպորտային միջոցների տվյալների համակարգերի մատակարարի և / կամ տրանսպորտային միջոցների արտադրողի կողմից (OnStar-ի դեպքում տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հասցեով www.onstar.com), որոնք կարող են ներառել համակարգային եւ սպասարկման սահմանափակումներ, երաշխիքային բացառություններ, պատասխանատվության սահմանափակումներ, անլար կապի ծառայություն մատուցողի պայմաններ, գաղտնիության կանոններ, տեղեկատվության օգտագործման եւ փոխանակման նկարագրություններ և օգտագործողի պարտականություններ: **Փոխադրամիջոցի արտադրողներ** էջում տեսե՛ք արտադրողների ցուցակը, որոնցից մենք փոխադրամիջոցներ ենք գնում:

Մենք պատասխանատու չենք Ձեր օգտագործման արդյունքում փոխադրամիջոցում մնացած որևէ տեղեկության համար: Մենք չենք կարող երաշխավորել այդպիսի տեղեկության գաղտնիությունը և նախքան փոխադրամիջոցը մեզ վերադարձնելը դուք պետք է հեռացնեք այն: Հեռատեղեկատվական տվյալները կփոխանցվեն արտակարգ իրավիճակների և արագ արձագանքման ծառայություններին, հեռատեղեկատվական ծառայության օպերատորներին կամ նրանց , ում հանդեպ մենք ունենք այդպիսի տվյալների տրամադրման օրինական կամ պայմանագրային պարտավորություններ:

Ինչպես ենք մենք օգտագործում Ձեր մասին տեղեկությունները

Ձեր կողմից տրամադրած կամ Ձեր մասին հավաքած տեղեկությունները մենք օգտագործում ենք Ձեզ ծառայություններ մատուցելու և հետևյալ նպատակներով.

- **Ձեզ հետ պայմանագիր կնքելու և պայմանագրով սահմանված ժամկետում Ձեզ ծառայություններ մատուցելու, այդ թվում՝**
    - Աջակցելու Ձեր պահանջած գործարքներին, ինչպիսիք են ամրագրումը, վարձակալությունը, ավտոմեքենաների գնումը կամ լիզինգը;
    - Տրամադրելու սպասարկում մեր փոխգործունեության շրջանակներում, կամ պատասխանելու Ձեր հարցմանը;
    - Մեր հավատարմության ծրագրերում Ձեզ ընդգրկելու և այդ ծրագրերին Ձեր շարունակական անդամակցության հետ կապված ոչ գովազդային տեղեկություն ուղարկելու:
- **Եթե դա անհրաժեշտ է մեր կողմից օրինական պարտավորությունների կատարման համար, այդ թվում.**
    - Ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից լինելու դեպքում, Ձեր տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունը տրամադրել արտակարգ իրավիճակների ծառայությանը:
    - Տեղեկություն տրամադրել կառավարությանը և կարգավորող մարմիններին, երբ դա պահանջվում է օրենքով իրավական գործընթացի, պարտավորությունների կամ պահանջների շրջանակներում:
- **Այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է մեր օրինական շահերի համար, ինչպես նշված է ստորև, և երբ մեր շահերը չեն խախտում ձեր տվյալների պաշտպանության իրավունքները, ներառյալ՝**
    - Հաղորդել Ձեր վարձակալության վերաբերյալ կարևոր տեղեկություններ, ինչպիսին է ժամանման և վերադարձի մասին իրազեկումը:
    - Աջակցել մեզ, ավելի լավ արտադրանք և ծառայություններ տրամադրելու հարցում. Օրինակ ՝ գնահատել մեր աշխատակազմի աշխատանքը, գնահատել արտադրանքի և մատուցված ծառայությունների որակը և օգնել մեզ կատարելագործել մեր կայքերը, սարքավորումները և ծառայությունները:
    - Կազմել վիճակագրություն և վերլուծություն հաճախորդների կողմից մեր կայքերից, արտադրանքից և ծառայություններից օգտվելու վերաբերյալ:
    - Մշակել Ձեր և մեր միջև փոխգործակցության պրոֆիլ, այդպիսով, մենք կարող ենք տրամադրել Ձեզ հարմարեցված առաջարկներ, հնարավորություններ և ծառայություններ, որոնք կարող են Ձեզ հետաքրքրել;
    - Պաշտպանել մեր օրինական իրավունքները և կառավարել մեր ցանցերի և սեփականության անվտանգությունը: Օրինակ, մենք կօգտագործենք CCTV ՝ ապահովելու մեր տարածքների անվտանգությունը: Մենք դա կանենք, որպեսզի հավաքենք չվճարված հաշիվները, որպեսզի խուսափենք Ձեր տուգանքների պատասխանատվությունից (օրինակ, ճանապարհային վճարներ) եւ բողոքներին արձագանքման նպատակով:
    - Տրամադրել Ձեր մասին տեղեկությունը երրորդ կողմին՝ խարդախությունները կանխելու և պաշտպանելու մեր բիզնեսի, մեր եւ հանրության շահերն ու իրավունքները, գաղտնիությունը, անվտանգությունն ու սեփականությունը:
    - Ձեր մասին տեղեկությունները փոխանցել երրորդ անձանց, որպեսզի մենք կարողանանք օգտվել հասանելի միջոցներից կամ նվազեցնել այն վնասը, որը մենք կարող ենք կրել, և ապահովել ցանկացած վարձակալության պայմանագրի կամ մեր կայքերի պայմանների կատարումը: Մենք նաև կտրամադրենք Ձեր տեղեկությունները երրորդ անձանց, եթե կարող են խախտվել այլ անձի իրավունքները:
    - Որպեսզի մենք կարողանանք օգտագործել հեռատեղեկատվական սարքեր:

Երբ տվել եք Ձեր համաձայնությունը, ներառյալ՝

- Ձեզ ուղարկել որոշակի գովազդային կամ թիրախային մարքեթինգային հաղորդագրություններ, հնարավորություններ և ծառայություններ, որոնք կարող են ձեզ հետաքրքրել:
- Ձեր գործարքի հետ կապված Ձեզ ուղարկել ընթացիկ տեքստային հաղորդագրություններ (օր.՝ հետաձգում օդանավակայանի մասնաճյուղում շինարարության պատճառով), վարձակալության ընդլայնված հնարավորություններ, հաճախորդների փորձի ամփոփումներ, մարքեթինգային առաջարկներ, ինչպիսիք են կտրոնները, զեղչերը, հատուկ վերջին րոպեի կամ հավատարմության և պարգևատրման մասին տեղեկատվություն:

Ձեր անձնական տվյալների պահպանումը

Մենք պահպանում ենք Ձեր անձնական տվյալները այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է մեր բիզնեսի նպատակներն իրականացնելու համար, ինչպես նշված է ստորև.

Մարքեթինգային նպատակներ. Ամրագրման և այլ առցանց նույնացուցիչների հետ կապված տվյալները մենք պահպանում ենք մինչեւ երեք տարի: Մենք պահպանում ենք մարքեթինգային այլ տեղեկություններ, ինչպիսիք են էլ. փոստի բաժանորդագրությունը և հավատարմության գրանցման տվյալները մեզ հետ Ձեր վերջին փոխգործակցությունից ի վեր մինչեւ 7 տարի:

Վարձակալման գործարքներ. Համաձայն տեղական իրավական պահանջների՝ մենք պահպանում ենք Ձեր վարձակալության պայմանագրի հետ կապված տվյալները վարձակալման պահից մինչև 7 տարի ժամկետով: Մենք պահպանում ենք Ձեր կատարած վճարումների գրառումները, գործարքի իրականացման ամսաթվից 2 տարի ժամկետով (վարձակալության վայրից կախված)**:**

Հաճախորդների սպասարկման վերաբերյալ հարցումներ. Մենք համընդանուր հարցումները պահպանում ենք 3 տարի, բացառությամբ այն դեպքի, երբ Դուք բողոք եք ներկայացնում: Այդ դեպքում մենք պահպանում ենք բողոքների մասին տվյալները 7 տարի:

Վեճեր և իրավական հարկադրանք. Եթե մենք ներգրավված ենք դատական կամ կարգավորող մարմինների նախաքննական գործընթացներին, ապա մենք պահպանում ենք տվյալները դատաքննության կամ հետաքննության և դրան հաջորդող 5 տարիների ընթացքում: Եթե կարգավորումը ենթադրում է, որ մենք պետք է ավելի երկար պահենք տվյալները, ապա մենք պահպանում ենք տվյալները ըստ կարգավորման կիրառման համար անհրաժեշտ ժամանակաշրջանի: Եթե մենք տվյալներ ենք տրամադրում իրավապահ մարմիններին, ապա այդ մասին գրառումը պահպանում ենք հետաքննության ավարտից հետո մեկ տարի:

Սոցիալական մեդիա եւ վիդջեթներ

Մեր վեբ կայքերը կարող են ներառել սոցիալական ցանցերի հնարավորություններ, ինչպիսին է Facebook-ի կոճակը: Այս միջոցները կարող են հավաքագրել ձեր IP-հասցեն, մեր կայքում Ձեր այցելած էջերը և կարող են ստեղծել cookie, որպեսզի միջոցը կարողանա գործել պատշաճ կերպով: Սոցիալական մեդիայի միջոցները և վիդջեթները կարող են նաև տեղադրված լինել երրորդ անձանց կամ անմիջապես մեր կայքի կողմից: Ձեր փոխգործակցությունը այս միջոցների հետ ղեկավարվում է դրանք մատակարարող ընկերության կողմից:

Եթե դուք օգտագործում եք այս սոցիալական մեդիայի կայքերից որևէ մեկը և չեք ցանկանում, որ այն մեր կայքի միջոցով հավաքագրի Ձեր տվյալները, ապա նախքան մեր կայք այցելելը ջնջեք համապատասխան Cookie-ները: Դուք նաև կարող եք արգելափակել սոցիալական հավելվածները

դիտարկչի հավելումների միջոցով: Այցելե՛ք սոցիալական մեդիայի կայքը նրանց plug-in- ի հրահանգների համար կամ լրացուցիչ տեղեկություններին ծանոթացեք մեր Cookie Քաղաքականություն բաժնում:

Ում հետ ենք մենք կիսվում տեղեկություններով

Դուստր ձեռնարկություններ

Մենք տրամադրում ենք Ձեր մասին հավաքած տեղեկատվությունը մեր դուստր ձեռնարկություններին ("Affiliates") `ձեր պատվիրած ծառայությունները մատուցելու (ձեր համաձայնությամբ) նպատակով:

Alamo
Մենք տրամադրում ենք Ձեր անձնական տվյալները Alamo-ին, հետևյալ նպատակներով.

- Կառավարել ձեր վարձավճարը, իսկ Alamo-ը կարող է կապվել Ձեզ հետ կամ աջակցել վարձակալության հարցում:
- Կապված ձեր գործարքներից բխող ցանկացած միջադեպի, կամ Alamo –ի հետ լրացուցիչ լիազորված վարորդի հետ գործարքների հետ, եթե Alamo –ը կարծում է, որ նման միջադեպի արդյունքում, դուք կամ լիազորված վարորդը կարող եք հետագա վարձակալությունների համար վտանգ հանդիսանալ:
- Որպեսզի Alamo-ը և դրա երրորդ կողմի ծառայություններ մատուցողը իրականացնեն հաճախորդների հեռախոսային հարցումներ:
- Ձեզ ուղարկել նմանատիպ ապրանքների կամ ծառայությունների վերաբերյալ մարքեթինգային հաղորդագրություններ, որոնք Alamo կարծում է, որ կարող են ձեզ հետաքրքրել, ներառյալ ` թիրախային գովազդը Alamo -ի կայքերում, ընտրված գործընկեր կայքերում և սոցիալական ցանցերում:
- Կազմել վիճակագրություն և վերլուծություններ Ձեր մասին և ցանկացած Ձեր լրացուցիչ լիազորված վարորդների ` Alamo -ի արտադրանքի և ծառայությունների օգտագործման, այդ թվում անանուն տվյալների հիման վրա եղած վիճակագրությունը, ինչը Alamo -ին հնարավորություն է տալիս ապագայում Ձեզ և մյուս հաճախորդներին տրամադրել ավելի լավ ծառայություններ, արտադրանք, սառքավորումներ և գործառույթներ:
  Նման տեղեկությունները Alamo-ին տրամադրելիս, մենք և Alamo-ը գործում ենք որպես տվյալների անկախ վերահսկողներ : Alamo -ը պահպանում է իր սեփական գաղտնիության քաղաքականությունը ` Alamo –ին մեր կողմից տրամադրված տեղեկատվության վերաբերյալ: Հորդորում ենք Ձեզ վերանայել Alamo –ի գաղտնիության քաղաքականությունը, որը կարող եք գտնել այստեղ `https://privacy.ehi.com

Մեր բիզնես գործընկերները և ծառայություն մատուցողները

Ձեր մասին տեղեկությունները մենք կտրամադրեն երրորդ անձանց, որոնք են (1) վճարման, վարչական և տեխնիկական աջակցության մատակարարները, (2) մեր ապահովագրական գործակալությանը, կորպորատիվ վարձակալության կամ այլ հաճախորդները կամ գործընկերները`վարձակալության գործարքը դյուրացնելու համար, (3) կապի մատակարարներ, որոնք մեր անունից Ձեզ են ուղարկում էլեկտրոնային հաղորդագրություններ եւ այլ մարքեթինգային ծառայություններին վերաբերող հաղորդագրություններ, (4) հաճախորդների աջակցության մատակարարներ `Ձեզ ծառայություններ մատուցելու համար, (5) պարտքերի հավաքագրման ծառայություններ մատուցողներ, (6) բողոքների ուսումնասիրողներ (7) մեր գովազդային և մարքետինգային գործընկերներն ու երրորդ կողմի լրատվամիջոցները, ներառյալ սոցիալական մեդիա կայքերը, որոնց մենք տրամադրում ենք մեր հաճախորդների վերաբերյալ ընդհանրացված կամ ինքնությունը չբացահայտող տեղեկատվություն, որպեսզի թույլ տանք նրանց ուղարկել մեր կողմից թիրախավորված գովազդային հաղորդագրություններ, վերլուծել, բարելավել և ղեկավարել

մեր տվյալները, իրականացնել էլեկտրոնային վերլուծության ծառայություններ և պահպանել ու բարելավել մեր ծառայությունները (ըստ համապատասխան գաղտնիության համաձայնագրերի):

Պետական մարմիններ

Ձեր անձնական տվյալները կարող են տրամադրվել նաև պետական մարմիններին, ինչպես նկարագրված է վերեւում:

Վաճառք , Միավորում կամ Վերահսկողության Փոփոխություն

- Ձեր տեղեկատվությունը կարող է նաեւ փոխանցվել այլ ընկերությունների ՝ «Enterprise Holdings» բիզնեսների կամ միջոցների ակտիվների փոխանցման, սեփականության իրավունքի փոփոխման, վերակազմակերպման կամ մասնակի կամ աբողջական իրավունքի փոխանցման դեպքում: Դա տեղի կունենա այն դեպքում, եթե կողմերը կնքեն այնպիսի համաձայնագիր, ըստ որի տեղեկատվության հավաքագրումը, օգտագործումը և բացահայտումը սահմանափակվում են բիզնես գործարքների նպատակներով, այդ թվում գործարքի շարունակելու կամ չշարունակելու որոշումը:
- Դուք կտեղեկացվեք էլեկտրենային նամակով, կամ մեր կայքերում երեսուն (30) օրվա ընթացքում երևացող ծանուցմամբ,այն դեպքում եթե տեղի ունենա սեփականության փոփոխություն, կամ ցանկացած փոփոխություն Ձեր անձնական տեղեկությունների վերահսկման վերաբերյալ, կամ օրենքով նախատեսված այլ միջոցներով:

Ընդհանուր տվյալների փոխանցումներ եւ մշակում

Այն տեղեկատվությունը, որը դուք տրամադրում եք մեզ, կամ, որը մենք հավաքագրում ենք, կարող է փոխանցվել կամ հասանելի լինել ամբողջ աշխարհի սուբյեկտներին, ներառյալ.

- *Alamo*. Եթե Դուք ամրագրում եք կատարում մեզ հետ կամ Alamo-ին պատկանող ձեռնարկության հետ, ապա մենք Ձեր անձնական տվյալները կփոխանցենք Alamo-ին: Enterprise Holdings, Inc- ը հիմնված է Միացյալ Նահանգներում և ունի կորպորատիվ պատկանելիության վայրեր Միացյալ Նահանգներում, Կանադայում, Գերմանիայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Իռլանդիայում և Միացյալ Թագավորությունում:

- *Երրորդ կողմի ծառայություններ մատուցողներ*. Այն երկրներում, որտեղ մենք չունենք կորպորատիվ պատկանելիության վայրեր, մենք օգտվում ենք երրորդ կողմի ծառայություններից , ինչպիսիք են զանգերի կենտրոնի աջակցությունը, բողոքների մշակման համակարգողները և SS մատակարարները:
- Alamo-ի Համաշխարհային Գլոբալ Տեղեկատվական Համակարգերի գրասենյակը գտնվում է Միացյալ Նահանգներում. Alamo-ը պահպանում է իր գլոբալ տեղեկատվական համակարգերը Միացյալ Նահանգներում: Եթե Դութ մեզ տրամադրում եք, կամ եթե մենք Ձեր մասին անձնական տվյալներ ենք հավաքում Միացյալ Նահանգներից դուրս, մենք Ձեր անձնական տվյալները կփոխանցենք և կպահպանենք Միացյալ Նահանգներում*:*

ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ձեր իրավունքները կարող են ներառել հետևյալը. 1) պահանջել մեզնից Ձեր անձնական տվյալների պատճենը, 2) հայցել, որ մենք շտկենք Ձեր անձնական տվյալները, 3) հայցել, որ մենք հեռացնենք որոշ կարգի տեղեկություններ, 4) պահանջել որոշակի տվյալների մշակման սահմանափակում, 5) ստանալ Ձեր կողմից տրամադրվող տեղեկությունը կանոնակարգված, համակարգչի համար ընթեռնելի ձևաչափով և 6) փոխանցել որոշ տեղեկություններ այլ կազմակերպությունների: Դուք

իրավունք ունեք առարկություն ներկայացնել ընդդեմ անձնական տեղեկության մշակման `չխախտելով մեր օրինական շահերը: Այն դեպքում, երբ մենք խնդրել ենք Ձեր համաձայնությունը տալ տեղեկատվություն մշակման համար, Դուք իրավունք ունեք ցանկացած պահի չեղարկել այդ համաձայնությունը:

Դուք կարող եք իրականացնել այս իրավունքները ` անմիջապես կապվելով մեզ հետ, օգտագործելով այս էջի ներքևում գտնվող հղումը: Մենք Ձեզ կպատասխանենք 30 օրվա ընթացքում կամ ըստ տեղական օրենսդրության պահանջի սահմանած ժամկետում:

Մենք մեզ իրավունք ենք վերապահում թույլ չտալ մուտք գործել Ձեր տվյալների հարթակ կամ սահմանափակել ձեր իրավունքները (օր. ` եթե այդպիսի բացահայտումը օրենքով արգելված է, կամ եթե կարող են խախտվել մեկ այլ անձի իրավունքները): Որոշ դեպքերում դա կարող է նշանակել, որ մենք կարող ենք պահպանել ձեր անձնական տվյալները, նույնիսկ եթե դուք ետ կանչեք ձեր համաձայնությունը:

Մարքեթինգի նախապատվություններ

Դուք իրավունք ունեք դեմ արտահայտվելու ուղղորդված մարքեթինգին, ինչպես նաև պրոֆիլավորմանը, որը մենք կատարում ենք մարքեթինգի նպատակով: Դուք կկարողանաք հրաժարվել ուղղորդված մարքեթինգային հաղորդագրություններից `հետևելով հրահանգներին, որոնք կլինեն Ձեր ստացած յուրաքանչյուր հաղորդագրության մեջ: Կարող եք նաև կապվել անմիջապես մեզ հետ ` օգտագործելով այս էջի ներքևում գտնվող հղումը: Դուք կարող եք հրաժարվել Alamo-ի կայքերին չվերաբերող գովազդներից `սեղմելով գովազդի վրա գտնվող գովազդի ընտրության պատկերանշանին կամ կայքում՝ գաղտնիության կարգավորումների միջոցով:

Փոփոխություններ այս քաղաքականությունում

Անհրաժեշտության դեպքում մենք կթարմացնենք այս Գաղտնիության Քաղաքականությունը՝արտացոլելու մեր գաղտնիության իրականացման մեջ կատարված փոփոխությունները:
Եթե մենք որևէ էական փոփոխություն ենք կատարում, ապա նախքան փոփոխությունն ուժի մեջ մտնելը, մենք Ձեզ կտեղեկացնենք էլեկտրոնային փոստով (ուղարկված Ձեր հաշվում նշված էլ. հասցեով) կամ այս կայքում ծանուցման միջոցով կամ օրենքով նախատեսված այլ ձևերով: Մենք հորդորում ենք Ձեզ պարբերաբար վերանայել այս կայքը `ծանոթանալու մեր գաղտնիության իրականացման վերաբերող վերջին տեղեկություններին:

Եթե դուք վարձակալում եք իրականացնում կամ այցելում եք վեբ կայք կամ բջջային կայք հետևյալ երկրներում, ապա ստորև նշված է Տվյալների Վերահսկողը:

Երկիր	Տվյալների Վերահսկող	Հասցե
Հայաստան	J.M.S. LLC	ՀՀ, ք. Երևան, 5/1 Հյուսիսային պողոտա